

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն

1. ՆՊԱՏԱԿԸ

Մրցումները անց են կացվում Հայաստանում վինդսերֆինգ մարզաձևի մասսայականացման, զարգացման, ինչպես նաև արտասահմանյան մասնակիցների Հայաստան ներգրավվելու և տուրիզմի զարգացման նպատակով:

2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Մրցումները անց են կացվում առազաստային մրցումների 2012-2015 ISAF կանոններով.

3.ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ա/ 12-14 օգոստոսի - մասնակիցների գրանցում;
14 օգոստոսի-ժամը 12.00- բացման արարողություն, 13.00-1 մրցելույթ,
15 - 19 օգոստոսի -մրցարշավներ ժամը 12.00-18.00
20 օգոստոս – փակման արարողություն;

բ/ Մրցումները կանցնեն կոմպլեքսային,RACE և SLALOM մրցաձևերի միմյանց համատեղությամբ ` ընդհանուր հաշվարկով ` յուրաքանչյուր դասի համար առանձին:Մրցումները կանցնեն Երևանի Առազաստային Ակումբի ջրատարածքում` մոթելի շրջան,ընդհանուր անց են կացվելու 12 մրցելույթ `6-RACE և 6-SLALOM `յուրաքանչյուր դասում ;օրական անցկացվելու են մինչև 6 մրցելույթ:

4.ԴԱՍԵՐԸ և ՁԵՎԵՐԸ;

ա/ մրցումները կանցնեն հետևյալ դասերում - PRACTICAL CONCEPT - մինչև 9.5 քառ/մ
- NAVIGATOR – մինչև 7 քառ/մ
- MARATHON

բ/ մրցումները կանցնեն աղջիկների և տղաների մեջ առանձին ` ընդհանուր հաշվարկով և մեկնարկով ` առանց տարիքային սահմանափակման :

5. ՄՐՅՈՒՆԻՑԹԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ և ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Մրցույթային կանոնակարգը և հայտարարությունները կախված կլինեն ակումբի տարածքում և մոթելում մրցարշավներից 1 ժամ առաջ;

6. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Մրցումների կազմակերպիչները և մրցավարները ոչ մի պատասխանատվություն չեն կրում մարզիկների որևէ կորստի, վնասվածքի,մահվան դեպքում մրցումների ընթացքում մրցարշավներին կամ այլ միջոցառումներին մասնակցելու հետևանքով:

7.ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Մրցումները բաց են : Մասնակիցների մեկնարկային վճարը կազմում է 10000 ՀՀ դրամ:
Տարածքում գործելու է վրանային ճամբար:

8.ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ.

Մրցանակային ֆոնդը կազմվում է մեկնարկային վճարների և հովանավորների կողմից սված գումարներից:

ՏՎՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՎԵՐ

Հովանավոր և կազմակերպիչ՝ Երևանի Առաջաստային Ակումբ ՀԿ, Հայաստանի
պրոֆեսիոնալ վիդեոսթիդիոսի և կայտինգի ֆեդերացիա:

ԵԱԱ և ՀՊՎ ԿՖ նախագահ՝

Մ.Թովմայան